

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մեջ:
Օտարադարձացիքը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшакъ»

Խմբագրատունը լսոց է առնուստան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):
Յայտարարում ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարում լինելների համար վճարում են
խմբագրատնիքը ըստ 2 կոպեկի:

“ՄՇԿ”

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. լ. Ն

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամայով ԱՄՆԵՆ ՕՐ (բացի տոն և տոներին հետևող օրերից):

ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տեղեկական կարգադրություններ, II Առաջնորդող յոգուածներ, III Ներքին տեսություն, IV Արտաքին տեսություն, V Խառն լուրեր, VI Հեռագրեր, VII Ֆելետոն և Բանասիրական, VIII Յայտարարություններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կես տարվան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3 ռ., երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ:

Գրվել կարելի է խմբագրություն մեջ հետևյալ հասցեով. Тифлис, редакция «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տասներորդ տարին — Ներքին տեսու-
թիւնը Նամակ Մակկայից: Ներքին լուրեր —
«Մշակ» հեռագրեր: Յայտարարություններ —
Յէլի և տոն:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Այս տասներորդ տարին է
արդէն, որ «Մշակ» գոյութիւն

Փ Ե Լ Ի Ե Տ Օ Ն

Ինն տարի անցաւ:—Յարձակումները չօգնե-
ցին:—Յունվարի 4-ի ժողովը:—Ռոստոմանց և
Ղաւասարդեանց:—Տէր Գովհանէս աւագ քահա-
նան:—Մանկունի և Մամբրէ:—Էջմիածնի բա-
րեկամներ և թշնամիներ:—Ինչ է բարոյական և
ինչ է անբարոյական:—Մի բարեկամական խո-
սակցութիւն բժշկի և նկարչի հետ:—Բժշկու-
թիւն, գեղարուեստ և մամուլ:—Գերմանիայի
մոլեռանդութիւնը հրէաների դէմ:—Ժամանակա-
ւոր յանցաւորներ և ապագայի յանցաւորներ:

Ինն տարի անցաւ: Ավստրիա է «Մշակի» գո-
յութեան տասներորդ տարին: Ինչքան էլ «Մշա-
կի» վրա յարձակվէին, դարձեալ նա յաղթող է
հանդիսանում:

Ամբողջ տարին մեր լրագրի թշնամիները ա-
մեն ջանք էին թափում կտորել «Մշակի» անու-
նը, մի կողմից յարձակվելով մեր լրագրի խմբա-
գրի մասնաւոր կեանքի վրա, միւս կողմից աշ-
խատելով ցոյց տալ թէ մենք յարուցելը այդ-
պէս անուանված լիբերալական հարցը հաւատարմու-
թիւնը քարոզելու դիտաւորութեամբ:

Բայց ինչ ենք տեսնում: Փոխանակ մեզ մեա-
սելու, այդ բոլոր մեղադրանքները մեզ, ընդհա-
կառակն, օգնեցին:

«Մշակի» այս տարվայ բաժանորդագրութիւնը
այնպէս լաւ է գնում, ինչպէս երբէք չէ եղել
ինն տարվայ ընթացքում, թէև, ի հարկէ, այս
տարի մենք կորցրինք մեր երկու երեկի բաժա-
նորդներին՝ այն է Ղազար Տէր-Ղազարեանցին և
Սարգիս Ղազարեան Նազարեանցին...

ձեռնարկները, ուրեմն, ինչքան թշնամական
զգացմունքներ էլ յարուցանի, վերջը միշտ յաղ-
թող է հանդիսանում...

Ամբողջ տարի տեղեկ կատարած բանակութիւնը
«Մշակի» դէմ կրօնական խնդրի առիթով, ամեն
կողմից լսում էինք, որ կաթոլիկ, բողոքական,

ունի և չորրորդ տարին է որ
մեր լրագիրը ամենօրեայ է:

Երբ մեր լրագիրը դարձաւ
ամենօրեայ, նա ճշմարիտ է, ա-
ւելի շատ բաժանորդներ ունեցաւ,
բայց և հրատարակութեան ծախ-
սըն աւելանալով, աւելացաւ և
տարեկան դեֆիցիտը:

յունադաւան, մահմետական հայերը՝ հայեր
էին:

Բայց ահա յունվարի 4-ին Արթուրու թառ-
թումում հաւաքվեցան «Հայոց բարեգործական»
ընկերութեան կանոնադրութիւնը քննելու ցան-
կացողները: Մօտ 90 հոգի ներկայ էին թառ-
թոնի դահլիճում և բացի երեք չորս մարդուց,
մնացածները «Մշակի» խմբագրի կատարչի, ան-
հայտ թշնամիներն էին, որոնք նրան պատահե-
լիս մինչև անգամ նրան զուրկ չեն տալիս:

Բայց երբ որ Գրիգոր Արթուրուի առաջարկեց
աւելացնել կանոնադրութեան խօսքերին թէ չըն-
կերութիւնը նպատակ ունի նպատակը լուսաւո-
րութեան տարածմանը հայերի մէջ: հետեւեալ
խօսքերը չառանց զաւանթի թիւնն ե-
ր ի տ ու թ է ա ն, —բոլոր ներկայ գտնված-
ները վեր կացան ինչպէս մի մարդ և ընդունե-
ցին այդ առաջարկութիւնը:

Դա մեծ յաղթութիւն է, դա ժամանակի նը-
շան է:

Ժողովը նախագահում էր բժիշկ Բ. Ն. աւա-
սարդեանց, որ ընկերութեան գլխաւոր հիմ-
նադիրներից մէկն է, կամ կանոնադրութեան մը-
շակողներից գլխաւորն է: Ինչպէս երևում է հա-
յոց բարեգործական, մարդասիրական և այլ այդ
տեսակ ընկերութիւններին վիճակված է հիմնված
լինել բժշկների ձեռքով: Բազում ընկերութիւնը
հիմնված է եղել բժիշկ Ռոստոմանցի ձեռքով,
Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակութեան ըն-
կերութիւնը հիմնված է եղել ապագայ բժիշկ Մի-
ղոմանցի ձեռքով, իսկ այստեղի բարեգործական
ընկերութեան հիմնելու մէջ գլխաւոր դերն է խա-
ղում բժիշկ Նաւասարդեանցը:

Ամբողջ ժողովում երկու մարդիկ կային միայն,
որոնք փորձում էին խանգարել ժողովի աշուղ-
վելուն, —բայց բաղդաւորապէս այդ նրանց չա-
ջողվեց:

Մի ուրիշ յաղթութիւն: Թիֆլիսի վաճառ-
մար-եկեղեցու աւագ քահանայ, տէր Գովհանէս
Սարգսեան, որ 48 տարի անընդ-կերպով հով-
ւում է իր ծախը, Մամբրէի և Մանկունու կա-
նոնադրութեան հիմնադրողն է:

«Մշակի» պէս մի հայերէն
ամենօրեայ թերթ հրատարակե-
լու համար, մի և նոյն ժամա-
նակ ծախսերի մէջ խնայող լինե-
լով, ինչպէս մենք էինք խնայող,
դարձեալ հարկաւոր է 12,000
րուբլ ծախս, այսինքն 1000
րուբլ ամսական:

Ունելով 900 բաժանորդ, ու-
րեմն տարեկան 9000 ռուբլ ար-
դիւնք, մենք ունէինք ամեն
տարի 3000 ռուբլ դեֆիցիտ, որ
ծածկում էինք մեր սեփական
միջոցներից: Միայն անցեալ 1880
թւին, ունելով 1100 բաժանորդ,
ուրեմն ստանալով 11,000 ռուբլ
մեր բաժանորդներից մեր դեֆի-
ցիտը պակասեց և մեզ բաւական
եղաւ 1000 ռուբլ մեր գրպանից
հրատարակութեան վրա դնելու,
դեֆիցիտը ծածկելու համար:

Ներկայ տարվայ ստորագրու-
թիւնը այնքան աճող է գնում,
որ մենք առաջին անգամ, մեր
լրագրի գոյութեան տասնե-
րորդ տարին, յոյս ունենք, վեր-
ջապէս, հրատարակութեան ծախ-
սը ծածկելու, առանց մեր անձ-

նական միջոցներից որ և է գու-
մար աւելացնելու:

Բայց դարձեալ «Մշակը» ա-
ռանձնական աճող հանգամանք-
ների մէջ է գտնվել միշտ, հա-
մեմատելով մեր կողմսեան թէ
տեղական և թէ ուսուց մա-
մուլի հետ: Մեր լրագիրը ունի
իր սեփական բնակարան, որի
վարձը հարկաւոր չէ տալ լրագրի
բիւզժէտից, խմբագիրը ուժիկ չէ
ստանում, լրագրի բիւզժէտից
դուրս են նոյնպէս տան ծառայի,
խմբագրատան վաւելիքի, մամի,
նաւթի և այլ մանր ծախսերը:
Այդ բոլոր ծախսերը միասին
գումարված կարելի է հաշել
3000 ռուբլ գումարի, եթէ
խմբագրի ուժիկը հաշենք գոնէ
1800 ռուբլ: Ուրեմն, իսկապէս,
«Մշակը» պահպանելու տարե-
կան ծախսը, եթէ մենք չունե-
նայինք մեր բնակարանը, փայտը,
լուսաւորութիւնը և այլն, եթէ
խմբագիրն էլ փոքր ի շատէ ու-
ճիկ ստանար, —կը լինէր ոչ թէ
12,000 ռուբլ, այլ կը հասնէր
15,000 ռուբլու:

նայ որ դա նրա եղբայրն է: Այդ կինը բարո-
յաւան է:

Մի փաստարան յանձն է առնում պաշտպա-
նել մի հարուստ մարդու շահերը և գործը այն-
պէս է տանում, որ վերջը նրա կլինէր բոլոր-
վին աղքատանում է, իսկ ինքն իր կլինէր բոլոր
թէ անշարժ և թէ չարժեքական կայքերի տէր է
դառնում: Այդ մարդը բարոյաւան է:

Երեք մարդ միմյանի մի առեւտրական գործ են
տանում ընկերութեամբ: Նրանցից երկուքը մի-
մանից մէջ խօսք են կապում երրորդ ընկերին
աղքատացնել իրանց ձեռքը գցելով: Նրա աշ-
խատանքի մասը: Վերջը նրանք բարեբախտ են
հանդիսանում, աղքատին դպրոցներ են հիմնում
գողացած փողերի փշրանքներով: Նրանք բա-
րոյաւան մարդիկ են:

Նշողները ցոյց են տալիս թէ միայն երկու
աղջիկ ունեն, իսկ երրորդ աղջկան աշխարհի
առջև յայտնում են որպէս տան աղախին և
այդպէս էլ պահում են: առաջիններին սիրում
են, պահում են նրանց շքեղ կերպով, աշխա-
տում են մարդու տալ, իսկ վերջինի մասին չեն
էլ հոգում, թող նա ընկնի մինչև անգամ հասա-
րակական տան մէջ... Ո՛վ ինչ կլինանայ: Այդ
ծնողները բարոյաւան են:

Մի աղքատացած, բայց փողոտայ կրող անձն
պատկեր է մի հարուստ աղջկայ հետ, առանց
նրան սիրելու, միայն փողի համար: Մի քանի
տարուց յետոյ փողը հատնում է, և ահա օր-
րոնք արձակում է իր կնոջը պահանջելով որ
անընդհատ փող տայ: Անընդհատ փողից նորից
փող է տալիս և կինը կրկին ընդունվում է իր
ամուսնու տանը: Երբ փողը կը հատնի, կինը
նորից կաքսորվի տանից: Դա ծածուկ է լինում,
ուրեմն մարդը բարոյաւան է:

Մի մարդ պահպանում է մի հարուստ աղջկայ
հետ, որին չէ սիրում և մի և նոյն ժամանակ
պահում է նրա փողով մի սիրուհի: Ոչ ոք այդ
բարոյաւան է:

Մի մարդ պահպանում է, ստանում է ամսա-
կան 200 ռուբլ, բայց հինգ տարուց յետոյ առ-

Եւ չը պէտք է մոռանալ որ մենք վարձատրուում ենք միմիայն խմբագրատան մէջ աշխատողներին և ծառայողներին, իսկ եթէ ուզենայինք վարձատրել զբոս աշխատողներին, անդրկովկասեան մի քանի գլխաւոր քաղաքների, ուստաց մայրաքաղաքների և Հայաստանի գլխաւոր կէտերի ու կ. Պօլսի թղթակիցներին, — վերեւ յիշված 15,000 ռուբլի գումարի վրա մենք պէտք է աւելացնէինք դարձեալ մի 4000 ռուբլի գումար:

Ուրեմն լրագրի տարեկան ծախսը ամենաքիչը կը լինէր 19,000 ռուբլի:

Ի հարկէ Եւրոպայում այդ տեսակ ծախս ամենօրեայ թերթի համար աննշան կը համարվէր, որովհետեւ այնտեղ լրագրի բաժանորդների թիւը ոչ թէ հարիւր եւ ոչ մի, այլ հազարներէն ու վերջին հաշուով: Եւրոպայում այն ամենօրեայ լրագիրը, որ երբեք, չորս, հինգ, ութ հազար բաժանորդ ունի, նա համարվում է մի ոչ շատ տարածված թերթ: Իսկ մեզ մօտ, որտեղ բաժանորդների թիւը հարիւրներով են հաշուում, խմբագիրը իրան բաղդաւոր է համարում, երբ նրա թերթի բաժանորդների թիւը հասնում է հազարի, կամ հազար հարիւրի, բայց մանաւանդ երբ տարեկան արդիւնքը ծածկում է հրատարակութեան տարեկան ծախսը:

Նում է մի գիտն և տուն է չինում, որ հարկը հազար ռուբլի արժէ: Ոչ ոք չը գիտէ թէ որտեղից են այդ փողերը, արդեօք երկնքից են ընկել, թէ պարոնը հաւաքել է նրանց իր ստորագրեալներէն կողոպտելով: Գործը դադանի է, ուրեմն մարդը քաւ ու յաւան է:

Մի մարդ շատ յարգված և պատված է հասարակութեան մէջ, նա ազգասէր է, ազգի բարերար է: Թէն գիտն թէ իր կարողութիւնը նա կազմել է գողութիւններով, խաբարիս թղթախաղով, կամ սուտ թղթագրամով, բայց որովհետեւ այդ բոլորը դադանի էր, — ուրեմն յարգելի անձը ամեն քաւ ու յաւան է:

Մի մարդ կտակաւորաբար լինելով, կտակը իր օգտին քանդել է: Այդ ապացուցված չէ, ուրեմն մարդը քաւ ու յաւան է:

Մի մարդ հարստանում է, առաջ է գնում, բարձրանում է իր ազգայինների վրա մասնութիւնների անկողով: Ոչ ոք այդ չէ կարող ապացուցանել: — ուրեմն, քանի որ դա գաղանի է, մարդը ամեն քաւ ու յաւան է:

Արեցէք ամենակեղտոտ բաները ծածուկ, — և դուք միշտ քաւ ու յաւան կը համարվէք:

Միայն յանդուրժեալ մի ունեցէք քաղաքական կերպով վարվել կեանքի մէջ ձեր համոզմունքներին, ձեր դաւանած սկզբունքներին: Համեմատ: Այն ժամանակ դուք կը լինէք վերին աստիճանի անքաւ ու յաւան:

Այժմ ընթերցողը կարծեմ հասկացաւ ինչ է բարոյական և ինչ է անբարոյական: Ուրեմն կանցնեն ուրիշ հարցերի:

Անցեալ տարվայ վերջին ամիսներին ամենից շատ հետաքրքրում էր թիֆլիսցիներին այն լուրը, թէ Վեդու Հայաստանի լրագիրը դառնալու է այս տարվանից ամենօրեայ:

Մի երեկոյ զանգակ են տալիս իմ դրանք և մտնում են իմ երկու լաւ բարեկամները, մի բժիշկ և մի նկարիչ: Իսկոյն խօսակցութիւնը բացվում է Վեդուի ամենօրեայ դառնալու մասին:

— Մի լրագիր, որ անբարոյականացնում է

Եւրոպայում շատ սովորական բան է որ մի լրագիր ունի տասն հազար, քսան հազար, յիսուն հազար բաժանորդ, իսկ կան շատ լրագիրներ, որոնց բաժանորդների թիւը հասնում է հինգ հարիւր հազարի, կամ վեց հարիւր հազարի....

Եւ ոչ թէ միայն հայոց հրատարակութիւնները Եւրոպայում, բայց և մեր երկրի ուստաց լրագիրները, որոնց ընթերցողների շրջանը շատ աւելի ընդարձակ է, գտնվում են մեր մամուլի նման անմխիթար դրութեան մէջ:

Եւր էր պատճառը որ թիֆլիսի ուստ անկախ լրագիրները, որոնք կառավարութիւնից օժանդակութիւն չեն ստանում, մտածեցին օգնել այդ անմխիթար դրութեանը արուեստական մի միջոցով, այն է հիմնելով բաժանորդական կան, ակցիոներական ընկերութիւններ, լրագրի գոյութիւնը պահպանելու համար:

Բայց հետեւանք ի՞նչ եղաւ: Խմբագրութիւնները չունենալով ստորագրողների բաւականացուցիչ թիւ, ուրեմն չունենալով արդիւնք, ոչ թէ միայն չը կարողացան տոկոսներ տալ ստացած ակցիոներին վրա, այլ չը կարողացան մինչև անգամ վերադարձնել տէրերին իրանց տուած ակցիաների կապիտալը և ակցիաները ստացան ողորմութեան նշանակութիւնը: Ընդհակառակն, ակցիաներ հաւաքելուց մի հինգ,

ներկայ սերունդը, չը պէտք է գոյութիւն ունենայ, ասացի ես:

— Գուք կողմնապահ էք, սիրելիս, պատասխանեց իմ բարեկամ բժիշկը:

— Ոչ, ես կողմնապահ չեմ: Կամ թող Վեդուի փոխի իր ընթացքը, կամ թող ոչնչանայ, կրկնեցի ես:

— Ի հարկէ դուք այսպէս կը խօսէք, կանգնեցին միմեանք բժիշկը և նկարիչը, որովհետեւ Վեդուի ֆելիտոսիստ էք և ձեր գրեւորների համար վարձ էք ստանում Վշակի խմբագրից:

— Ոչ, ասեցի ես, թող Վեդուի տեղ լինեն թիֆլիսում հինգ, վեց, տասն ամենօրեայ հայոց թերթեր և ես կուրախանամ, թէ կուզ Վշակին էլ, մրցութիւնից՝ ստիպված լինի ոչնչանալ: Բայց վնասակար ուղղութեամբ մի լրագիր չը պէտք է գոյութեան իրաւունքն ունենայ....

— Ի՛նչ էք ասում, վրա բերեց բժիշկը, այնքան վնասակար իսկ չէ Վեդուի, նա էլ հայոց, ազգային թերթ է, Վշակին էլ հայոց ազգային թերթ է, թող երկուսն էլ գոյութիւն ունենան:

— Լաւ, թողնենք այդ խօսակցութիւնը, վերջացրի ես, մենք երբեք, ինչպէս տեսնում եմ, այդ հարցի մէջ միմեանց հասկանալու չենք: Այժմ ես մի ուրիշ խնդիրը ունեմ ձեզ մօտ, իմ բարեկամներ:

— Խօսեցէք, խօսեցէք, ասացին երկուսը:

— Գուք բժիշկ, շատ հեռու էք ապրում և տանը երբեք չէք լինում: Ես հիւանդանալու ժամանակ, թէն միշտ կամենում եմ ձեզ դիմել, բայց ստիպված եմ Վ—ին դիմել, որ այստեղ մօտիկ է կենում: Արդեօք լաւ բժիշկ է նա:

— Ի՛նչ էք ասում, ինչպէս կարելի է այդ տեսակ բժիշկին դիմել, նա բժիշկ չէ, նա մարդասպան է, նա խաբարիս, շարժառան մարդ է, վրդովված կանչում էր բարեկամս:

— Միթէ այդ աստիճան ազէտ է նա և անազնիւ: Ինչ և իցէ նա դարձեալ գիտութիւն ունի, նա բժիշկ է, վերջապէս, համալսարանական է, դիպում ունի, նկատեցի ես:

— Ոչ, ոչ, նա բժիշկ չէ, լաւ է այդ տեսակ բժիշկ բուրժուական չը լինի, լաւ է հիւանդը բժ-

շատ շատ վեց ամսից յետոյ, խմբագրութիւնը դարձեալ գումարում էր բաժանորդների ընդհանուր ժողովը և դարձեալ նոյն անձինքներից, որոնք արդէն տուած էին երկու թէ երեք հարիւր ռուբլի, պահանջում էր լրացուցիչ ակցիաներ, այսինքն նորից պահանջում էր իւրաքանչիւրից երկու թէ երեք հարիւր ռուբլի: Եւ դարձեալ այդ լրագիրները ոչնչացան:

Իսկապէս մի հայոց ամենօրեայ թերթ մեր երկրում պահպանելու համար անպատճառ հարկաւոր է ամենաքիչը տարեկան 19,000 ռուբլի: Իսկ այդ գումարը հեշտութեամբ ծախսելու համար հարկաւոր է կամ աւանձին աջող պայմաններ ունենալ, կամ հարկաւոր է սպասել որ ընթերցանութեան պահանջը այնքան զարգանայ մեր հասարակութեան մէջ, որ լրագիրը ինքն իրան պահպանի:

Իսկ արուեստական միջոցներով, առանց գրվողների բաւական մեծ թիւ ունենալու — ինչպէս ցոյց է տուել մեզ փորձը, նոյն իսկ մեր երկրում, — անհնարին է երկար ժամանակ պահպանել մի ամենօրեայ թերթի գոյութիւնը:

Մենք կրկնում ենք, մենք մեզ բաղդաւոր կը համարենք, եթէ այս տարի «Մշակի» տարեկան արդիւնքը կը ծածկի նրա տարեկան ծախսը:

կին բուրժուական չը դիմէ, քան թէ դիմէ այդ տեսակ շարժառանգներ....

— Ի՛նչ բժիշկ, այդ աստիճան կողմնապահ ի՞նչ չը պէտք է լինել: Գուք էլ բժիշկ էք, նա էլ բժիշկ է: Բայց կտրենք այդ խօսակցութիւնը: Սիրելի նկարիչ, ես ձեզ մօտ էլ մի խնդիրը ունեմ: Ես ուզում եմ աւանդ Հայաստանի աւերակների նկարները, արդեօք խորհուրդ էք տալիս ինձ գնել Նիկիտինի պատկերների ժողովածուն:

— Ի՛նչ էք ասում, աղաղակեց նկարիչը վրդովված, միթէ Նիկիտինի ժողովածուն կարելի է աւանդել: Նրա նկարները անձիւտ են, անպիտան են, լաւ է բուրժուական չը նկարվէին մեր Հայաստանի հնութիւնները, քան թէ այդ անձուհի ձեռք:

— Կա իմ կարծիքով ծայրայեղութիւն է, սիրելի նկարիչ, ինչքան էլ պակասութիւն ունենային այդ տեսակ նկարները, դարձեալ հասկացողութիւն են տալիս Հայաստանի աւերակների մասին: Վերջապէս դուք էլ նկարիչ էք, նա էլ նկարիչ է....

— Ոչ, ոչ, բղաւում էր կատաղած նկարիչը, լաւ է մեր հնութիւնների նկարները բուրժուական չը լինէին, քան թէ այդ տեսակ նկարներ, որոնք անբարոյականացնում են արհեստը....

— Ահա, տեսնում էք բարեկամներ, որքան դուք ինքներդ ծայրայեղ էք, բայց ինձ էլք մեղադրում ծայրայեղութեան և կողմնապահութեան մէջ, երբ ես խօսում եմ մի վնասակար լրագրի մասին: Ձեզ կասեմ, բարեկամ բժիշկ, եթէ մի բժիշկ տգէտ է, անազնիւ է, նա շատ շատ վտանգաւոր կարող է լինել ներկայ սերունդի համար, նա անաջող կերպով բժշկելով, ճշմարիտ է պատճառ կը դառնայ մի քանի տասնեակ մարդկանցի մահվան: Ձեզ, իմ սիրելի նկարիչ, կասեմ, որ եթէ մի նկարիչ վատ, անձիւտ, անհունի կերպով պատկերացրել է մի ազգի պատմութեան և ճարտարապետութեան անմահ արձանները, նա յանցաւոր է, այո՛, նա անբարոյականացնում է արհեստը, բայց նրա արածը դրստով, ուղղելի է: Մի այլ նրանից աւելի բարձր, աւելի լաւ

Նայելով ստորագրութեանը մենք դրա վրա մեծ յոյս ունենք: Դա կը լինի մի մեծ քայլ դէպի առաջ մեր մամուլի գոյութեան պատմութեան մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՈՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

29 դեկտեմբերի 80

Աշխարհիս օրէնքը միշտ այդպէս է. մի մարդ, որը ձեռնարկում է իր ուժից վեր բան բռնելու, նա անպատճառ պիտի ընկնի առաջին ըզզալի հարուածից և միանգամից ամենախայտառակ կերպով բոլրիկացնէ իր բոլոր թոկութիւնը և անշնորհութիւնը: Այդ ճշմարտութեան կրկնվելը, ի միջի այլոց, ակներեւ տեսնում ենք այժմ «Մեղու Հայաստանի» լրագրի վրա: Մի քանի տարի շարունակ «Մշակի» վրա ռեկի ծրուկով, պառաւի պէս միթմրթալով, ամեն հարցի մէջ կոտրած գլխի պէս ներս պրծնելով, գլխին եկածը դուրս տալով, առանց տակն ուղւոյն փնտրելու, վերջն ու առաջ մտածելու, միտք ու իմաստը հասկանալու, «Մեղուն» հասու վերջապէս այնտեղ, երբ «Մշակը» բարձրացրեց ժողովրդի սրտին մօտիկ մի խիստ ժամանակակից բան, աշխատելով նորան դուրս բերել և վերականգնել այն մտքի և խանգարված հասկացողութիւնից, որը ունէր նորա վրա հայ հասարակութեան մի խիստ փոքրագոյն մասը: «Մեղու» լրագիրը այս դէպքում եւ չը կարողացաւ զսպել իր պառաւային սովորութիւնը, դարձեալ սկսեց զլիւց եկածը դուրս թափել, ամիսներով հայ հասարակութեան գահէլ ան տանել և վերջապէս նորան այնչափ համբերութիւնից հանեց, որ դանդաղ հասարակութիւնը ինքը ստիպված եղաւ վեր կենալ և հարկաւոր դրողներին լեզուով, որոնք պատկանում են ամեն հասակին և ամեն դասակարգին, յայտնել իր կատարեալ համբաւածութիւնը «Մշակի» արտայայտած մտքերին թէ՛ այո՛, հարկը անգամ այո՛, մենք ուզում ենք վերջապէս, որ մեր միջից միանգամ ընդ միշտ

նկարիչ կը գայ և կը դրստէ նրա սխալը, կը ներկայացնէ գիտութեանն ու արհեստին մի ճիշտ, մի զեղեցիկ, մի ընտիր պատկեր հնութեան թանգարանի յիշատակների: Բայց մի պուրլիցիստ, մի լրագրաստ, մի գրող երբ վնասակար, խաւար, մեղեման, անբարոյականացող, խաբարիս մտքեր է սերմանում հասարակութեան մէջ, նա ոչ թէ միայն վնասում է հասարակութեան ներկայ սերունդին, բայց անբարոյականացնում է և ապագայ սերունդներ, գուցէ իր անբարոյականացնող գործունեութեան հետեւը թողնելով շատ և շատ դարերի ընթացքում, որովհետեւ ներկայ սերունդը, որ ընդունել է վատ մտքերի թոյնը, դառնում է ապագայ սերունդի կրթիչ: Եւ իր կողմից կրթում է հետեւեալ սերունդը, և այդպէս յաջորդաբար:

Այսօրվայ ժամանակակից գերմանացու հրէշաւոր մոլեռանդութիւնը իր հրէշայ համաքաղաքացու դէմ, կարծում էք ժամանակակից գրողից, մի որ և իցէ Տրէյչէկէյց նրա գլխում պատաստած մտքի արդիւնք է, ոչ, այդ մոլեռանդութիւնը դուցէ հետեւեալ է տալիս և երբորդ, կամ տալիս և չորրորդ դարում Գերմանիայում քարոզված անհամբերողութեան վարդապետութեան: Մամուլի մէջ այսօր սերմանած վատ սերմը կը բուսնի, կաճի գուցէ դեռ երկու, երեք դարից յետոյ: Տեսնում էք, բարեկամներ, որքան վտանգաւոր է խաղալ ժողովրդի մոլեռանդութեան հետ, չողորմելի բոլեական բաւականութեան համար նրա վատ կրքերին, փայփայել նրա նախապաշարմունքները, պահպանել խաւարասիրութիւնը: Մի վատ բժիշկ, մի վատ նկարիչ ժամանակի համար, բոլորի համար յանցաւորներ են, բայց մի անազնիւ գրող յանցաւոր է իր ազգի ամբողջ ապագայի համար:

Իմ բարեկամները ինձ ոչինչ չը պատասխանեցին և մենք միասին դուրս եկանք իմ քնակաւանից՝ մօտակայ պանդոկում ընթրիք ուտելու և մի մի շիշ գարնջուր խմելու համար:

Ասիացի